զնա չհայիլ 'ի դառնութիւն ժամանակին եւ յաղքատութիւն Աթոռոյն եւ մի ունկն դնել բանից օտարաց, այլ արկանել ձեռն 'ի գործ շինութեան, զի ինքեանք պատրաստ էին օգնել նմա։

Հասին թուղթք, Վերակացուք և Ոստիկանք յԵրուսաղէմ, և զկնի աւուրց ինչ կազմեցաւ ատեան մեծ յապարանս Բդեշխին. Դատաւորն եւ ամենայն մեծամեծք այլազգեաց, եկին Ճարտարապետք որմնադիրք եւ որք միանգամ տեղեակք էին գործոց շինութեան. հրաւիրեցան անդ Թարգմանք և Փոխանորդք երից ազգաց, և ընթերցան առաջի բազմութեան զհրովարտակս Արքային, տրեալ իւրաքանչիւր ազգաց, յորում յետ ծանուցանելոյ զնորոգութիւն տաճարին Ս. Յարութեան, խստագոյնս պատուիրէ Դատաւորաց և Վերակացուաց, չփոխել զնախնական դիրս, չյաւելուլ ինչ, եւ չանցանել զչափն և զսահմանն առաջին. եթէ ոք յանդգնեսցի գործել ընդդէմ օրինաց և Կայսերական հրամանին սակս իւրոյ ագահութեան եւ զօշաքաղութեան՝ մուծանելով փոփոխութիւնս ինչ 'ի շինուածն, այնպիսին ոչ երբէք ունի զերծանիլ 'ի պատիժ պատուհասից։ Ապա եհարց Ատեանն ցՓոխանորդս երից ազգաց, թէ զի՞նչ են կամք ձեր, եւ նոքա ետուն պատասխանի. քննել օրինօք դատարանի զբաժին տեղիս իւրաքանչիւր ազգաց և թոյլ տալ նորոգել նոցա զբաժինս իւրեանց, ըստ զօրութեան Կայսերական հրովարտակին։ Ընկալեալ զայս Ատենակալաց՝ գնացին բազմութեամբ 'ի Ս. Յարութիւն, և ետուն քննել և չափել 'ի ձեռն Ճարտարապետաց զբովանդակ տեղիս իւրաքանչիւր ազգի, և 'ի գիր հարեալ զայն՝ ետուն զմէն մի վաւերացեալ պատճէնս 'ի ձեռս իւրաքանչիւր ազգի. ապա այնուհետեւ սկիզբն արարին նորոգութեան։ Հանեցին վարդապետ նորոգեաց զբաժին տեղիս Հայոց, որք են. սենեակն զոյգ պատուհանաւ, որ հայի 'ի վերայ արտաքին մեծի դրան Ս. Յարութեան. ամբողջ եկեղեցին Վերնատան 37 վերելից քարեայ աստիճանօք նորին. Իւղաբերից սեղանն եւ երեք կամարքն անդ, Հանդերձ բաժանման խորանն, Լուսաւորիչ եկեղեցին 'ի վերայ այրի Գիւտոյ Խաչին, և զերիս սեղանս անդ. (այժմ երեւի միայն